ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«04» Ապրիլի 2022թ. N ՄՈ/210-2022

ք. Արմավիր

«ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԻՔԱՅԵԼ ՎԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, 163-րդ, 164-րդ հոդվածներով և 169-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Միքայել Վանյանի 2022 թվականի մարտի 25-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Միքայել Վանյանին տրամադրել 2020-2021 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մասը՝ 2022 թվականի ապրիլի 11-ից 22-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Միքայել Վանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Պավել Մկրտչյանին:
3. Միքայել Վանյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի ապրիլի 25-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Недействительная подпись **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

VERIFIED OCSP 4/4/2022 15:59:09 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505